



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/7692/02/22**
2025թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/7692/02/22
Նախագահող դատավոր՝ Ն. Կարապետյան
Դատավորներ՝ Մ. Հարթենյան
Ս. Մատինյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
զեկուցող	Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
	Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
	Ս. ՄԵՂՐՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
	Վ. ՔՈԶԱՐՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի
հայցի ընդդեմ Հակակոռուպցիոն կոմիտեի, Հարկադիր կատարումն ապահովող
ծառայության, Կենտրոնական բանկի ու Ֆինանսների նախարարության՝ որոշակի
գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, քաղաքացիական
գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2024 թվականի որոշման դեմ
Ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը պահանջել են
«վերացնել թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում ՀՀ հատուկ քննչական
ծառայության կողմից Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի նկատմամբ
կիրառված կալանքները (հիմք՝ 08.11.2016թ. «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշում,

08.11.2016թ. կազմված «Գույքի վրա կալանք դնելու» վերաբերյալ արձանագրություն, 28.11.2016թ. «Կալանադրված գույքը պահպանության հանձնելու մասին» որոշում, 05.12.2016թ. կազմված արձանագրություն՝ վերականգնելու հայցվորների խախտված սեփականության իրավունքը: Որպես հետևանք պարտավորեցնել 1) ՀՀ կենտրոնական Բանկին Վահան Սիմոնյանին և Սյուզաննա Գալստյանին վերադարձնել 31 անուն ոսկյա և ադամանդյա զարդերը (21 մատանի և 10 ականջոդ), 2) հարկադիր կատարումն ապահավող ծառայությանը պարտավորեցնել իրականացնել Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի նկատմամբ կալանքի վերացումից բխող անհրաժեշտ գործողություններ՝ կալանքը վերացնելու վերաբերյալ հաղորդագրություններ ուղարկելով բոլոր իրավասու անձանց: Պատասխանողներից հոգուտ հայցվորների համապարտությամբ բռնագանձել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, ինչպես նաև 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար»:

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 07.12.2022 թվականի «Ենթակայության վերաբերյալ վեճը լուծելու մասին» որոշմամբ թիվ ՀԿԴ/0051/02/22 (ԵԴ/7692/02/22) քաղաքացիական գործն ըստ հայցի Վահան Սիմոնյանի, Սյուզաննա Գալստյանի ընդդեմ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ քրեական գործի շրջանակներում Վահան Սիմոնյանի, Սյուզաննա Գալստյանի անշարժ և շարժական գույքերի վրա դրված կալանքները վերացնելու և որպես հետևանք՝ ոսկյա և ադամանդյա զարդերը Վահան Սիմոնյանին, Սյուզաննա Գալստյանին վերադարձնելու պահանջների մասին, որոշվել է, որ այն ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը **(հիմք՝ դատական իշխանության պաշտոնական կայք, (court.am))**:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.12.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Վերացնել թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականի որոշմամբ կիրառված կալանքը: Հայցը՝ մնացած մասով, մերժել: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից հոգուտ Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից հոգուտ Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Դատական ծախսերի բաշխման հարցը մնացած մասով համարել լուծված»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2024 թվականի որոշմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի, Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 28.12.2023 թվականի վճիռը բեկանվել ու փոփոխվել է հետևյալ կերպ.

«1. Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի հայցն ընդդեմ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ քրեական գործի շրջանակներում Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքերի վրա դրված կալանքները վերացնելու և որպես հետևանք 31 անուն ոսկյա և ադամանդյա զարդերը Վահան Վահագնի Սիմոնյանին, Սյուզաննա Յուրիկի Գալստյանին վերադարձնելու

պահանջների մասին, բավարարել մասնակիորեն:

2. Վերացնել թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում ՀՀ հատուկ քննչական ծառայության կողուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ կիրառված արգելանքը:

3. Պարտավորեցնել ՀՀ կենտրոնական բանկին Վահան Վահագնի Սիմոնյանին, Սյուզաննա Յուրիկի Գալստյանին վերադարձնել 28.11.2016թ. «Կալանք դրված գույքը պահպանության հանձնելու մասին» որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկին ի պահ հանձնված 31 անուն զարդերը:

Մնացած պատասխանողների մասով հայցը մերժել:

4. ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից համապարտությամբ հոգուտ Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

5. ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից համապարտությամբ Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

6. Դատական ծախսերի բաշխման հարցը մնացած մասով համարել լուծված:

7. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀԿԱ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

3. ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից համապարտությամբ հոգուտ Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես Վերաննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից համապարտությամբ հոգուտ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրքի գումար»:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ են ներկայացրել Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը (ներկայացուցիչ Կարեն Հովհաննիսյան):

2. Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 146-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ, 121-րդ, 139-րդ, 150-րդ, 172-րդ և 192-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում Հատուկ քննչական ծառայության կողուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշումը վերացված չլինելու

պայմաններում չէր կարող խոսք լինել արգելանքի տակ գտնվող գույքը հայցվորներին վերադարձնելու մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գույքի նկատմամբ կիրառված արգելանքը կարող էր հանվել միայն այն պայմաններում, երբ հայցվորների և պատասխանողների միջև առկա լիներ նյութաիրավական վեճ, ինչը տվյալ դեպքում բացակայում է: Հետևաբար, սույն գործով նյութաիրավական պահանջը ներկայացվել է ոչ պատշաճ պատասխանողների դեմ, որպիսի պահանջը ենթակա էր մերժման:

Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասը չի պարունակում նշումներ այն մասին, թե սույն գործով ո՞ր պատասխանողի դեմ է բավարարվել թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ կիրառված արգելանքը վերացնելու մասին պահանջը, ու ո՞ր պատասխանողն է պատասխանատու այդ պահանջի մասով:

Դատական ծախսերի մասով Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, քանի որ կիրառված արգելանքը վերացնելու պահանջի մասով պատասխանողը բացահայտված կամ նշված չլինելու պայմաններում պատասխանողները դատական ծախսերի մասով ծանրաբեռնվել են ակնհայտ ոչ իրավաչափ պարտավորությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2024 թվականի որոշումը և հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական ցուցիչի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին, 6-րդ, 7-րդ, 364-րդ և 365-րդ հոդվածները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կենտրոնական բանկը սույն գործով պատշաճ պատասխանող չէ, քանի որ տվյալ պարագայում Կենտրոնական բանկը հանդես է եկել որպես տվյալ արժեքների «պահառու», այսինքն՝ հակադիր շահերով օժտված անձ տվյալ դեպքում կարող էր լինել այն քննչական մարմինը, որի քննիչի որոշման հիման վրա դրանք պահվում են Կենտրոնական բանկում: Բացի այդ, «Կալանք դրված գույքը պահպանության հանձնելու մասին» որոշման պահանջները Կենտրոնական բանկի համար ipso facto եղել են օրինական, ոչ վիճարկելի և պարտադիր կատարման ենթակա, ուստի սույն գործով քննության առարկա ոսկյա զարդերի տիրապետումը Կենտրոնական բանկի կողմից ի սկզբանե եղել է օրինական, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում քրեական գործերով արգելանքի տակ գտնվող գույքի վրա և գտել է, որ նշված օրենքի փոփոխությունն ուժի մեջ է մտել 01.07.2022 թվականին, իսկ սույն գործով հայցը ներկայացվել է 17.02.2022 թվականին՝ անտեսելով,

որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով:

Վերաքննիչ դատարանը, խախտելով ինչպես «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի, այնպես էլ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջները, շուրջ 80.000 ՀՀ դրամի չափով համապարտության կարգով պետական տուրքի վճարման պարտականություն է դրել ինչպես Ֆինանսների նախարարության, այնպես էլ Կենտրոնական բանկի վրա, մինչդեռ օրենքի ուժով Կենտրոնական բանկն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, բացառությամբ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, կամ կարճել գործի վարույթը:

2.2 Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի վերաբերյալ Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի պատասխանի հիմքերն ու հիմնավորումները

Ֆինանսների նախարարության՝ որպես պատշաճ պատասխանող հանդիսանալու հանգամանքն ուղղակիորեն բխում է օրենքի պահանջից: Մասնավորապես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է պահանջ՝ նշված հիմքով հայց հարուցելու պարագայում ֆինանսական մարմնին պատասխանող ներգրավվելու համար, որպիսի պահանջը վերացվել է միայն թիվ ՀՕ-237-Ն օրենքով: Այդ օրենքն ուժի մեջ է մտել միայն 01.07.2022 թվականին, այսինքն՝ նշվածն արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործերի նկատմամբ հետադարձության կարգով չի կարող կիրառվել, քանի որ վատթարացնող դրույթը հետադարձ ուժ չունի:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ որևէ խախտում չկա դատական ծախսերի մասով, քանի որ Կենտրոնական բանկը և Ֆինանսների նախարարությունը հանդիսանում են համապարտ պատասխանողներ, ուստի հայցվորների իրավունքների խախտումներն առաջացել են վերջիններիս գործողությունների (անգործության) արդյունքում:

2.3 Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքի վերաբերյալ Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի պատասխանի հիմքերն ու հիմնավորումները

Կենտրոնական բանկը սույն գործով պատշաճ պատասխանող է, իսկ հայցվորների գույքի տիրապետումը Կենտրոնական բանկի կողմից ապօրինի է, քանի որ տիրապետման համար առկա չէ որևէ իրավական հիմք:

Կենտրոնական բանկը վճռաբեկ բողոքում վկայակոչել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասը, մինչդեռ սույն գործով այն կիրառելի չէ, քանի որ նշված հոդվածն ընդունվելու պահի դրությամբ այդ իրավահարաբերություններն արդեն դադարած են եղել, այսինքն՝ քրեական գործով կալանքի տակ գտնվող գույք, որպես այդպիսին, առկա չի եղել:

Կենտրոնական բանկի այն փաստարկը, որ վերջինս ազատված է հարկերից և տուրքերից, ուստի 80.000 ՀՀ դրամի չափով համապարտության կարգով պետական տուրքի վճարման պարտավորություն դնելով Կենտրոնական բանկի վրա՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածն ու «ՀՀ

կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը ոչ թե պետական տուրքի վճարման պարտականություն է դրել Կենտրոնական բանկի վրա, այլ՝ արդեն իսկ վճարված պետական տուրքի հատուցման պարտավորություն, որոնք տարբեր հասկացություններ են:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հատուկ քննչական ծառայության կողուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի 08.11.2016 թվականի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ քրեական գործով քաղաքացիական հայցն ու գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով կալանք է դրվել մեղադրյալ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի վրա (**հատոր 2-րդ, գ. թ. 94**):

2) Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Լ. Ստեփանյանի կողմից 08.11.2016 թվականին կազմված «Գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ կալանք է դրվել «Ոսկու աշխարհ» տոնավաճառում գտնվող տաղավարում մեղադրյալ Վահան Սիմոնյանին պատկանող թվով 21 անուն մատանու և 10 զույգ ականջօղերի վրա (**հատոր 2-րդ, գ. թ. 95-97**):

3) Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի 28.11.2016 թվականի «Կալանք դրված գույքը պահպանության հանձնելու մասին» որոշմամբ Վահան Սիմոնյանի պահախցից թվով 31 անուն դեղին մետաղից զարդերը փաթեթավորված և կնիքված վիճակում հանձնվել են Կենտրոնական բանկ պահպանության, որի վերաբերյալ 05.12.2016 թվականին կազմվել է գույքը պահպանության հանձնելու մասին թիվ 1 արձանագրությունը (**հատոր 2-րդ, գ. թ. 98-100**):

4) Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով 04.12.2018 թվականին կայացված դատավճռով Վահան Սիմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: (...): **Դատական ծախսերի, ինչպես նաև հնարավոր քաղաքացիական հայցի բռնագանձումն ապահովելու նպատակով պահպանվել է Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 08.11.2016 թվականին կայացված «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև նախաքննության մարմնի կողմից 05.12.2016 թվականին կազմված արձանագրությամբ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված՝ 399.810 գրամ քաշով ոսկու ձուլակտորների և 31 անուն դեղին մետաղից զարդերի վրա դրված կալանքը: Քրեական գործով դատական ծախսերի բռնագանձման և իրեղեն ապացույցների փնտրման հարցերը թողնվել է ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի լուծմանը՝ նույն դատարանում քննվող թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործով կայացվելիք գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտով (հատոր 2-րդ, գ. թ. 16-66):**

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ամբաստանյալ Վահան Սիմոնյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման քրեական գործի շրջանակներում անդրադառնալով Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 08.11.2016 թվականին կայացված «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշումը վերացնելու և 05.12.2016 թվականի արձանագրությամբ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված թվով 31 անուն ոսկյա ու ադամանդյա զարդերի վրա դրված կալանքը վերացնելու,

«կալանադրված գույքը» Վահան Սիմոնյանին վերադարձնելու մասին վերաքննիչ բողոքում նշված պահանջներին, 17.09.2019 թվականի որոշմամբ այն մերժել է՝ պատճառաբանելով, որ **«տրուժողի դատավարական իրավունքների իրացման երաշխիքները, ինչպես նաև դատական ծախսերն ապահովելու նկատառումներից ելնելով՝ չի կարող բավարարվել նաև ՀՀ հափուկ քննչական ծառայության վարչության պերի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 2016թ. նոյեմբերի 8-ին կայացված՝ «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ Վահան Վահագնի Սիմոնյանի անշարժ և շարժական գույքերի, ինչպես նաև՝ նախաքննական մարմնի կողմից 2016թ. մայիսի 3-ին և 2016թ. դեկտեմբերի 5-ին կազմված արձանագրություններով՝ ՀՀ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված ոսկու ձուլակտորների և 31 անուն զարդերի վրա դրված կալանքը վերացնելու մասին բողոքաբերի պահանջը, քանի որ չի վերացել գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը: Հետևաբար այս առումով ևս ամբաստանյալի իրավունքների խախտումներ առկա չեն»** (հատոր 2-րդ, գ. թ. 67-86):

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 24.01.2020 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 17.09.2019 թվականի որոշման դեմ ամբաստանյալ Վահան Սիմոնյանի և պաշտպան Կ. Հակոբյանի վճռաբեկ բողոքը, **որով պահանջ է ներկայացվել նաև գույքի վրա կալանք դնելու բոլոր որոշումներով վերցված ամբողջ ոսկյա զարդերը Վահան Սիմոնյանին վերադարձնելու, ինչպես նաև անշարժ և շարժական գույքի վրա կիրառված բոլոր արգելանքները վերացնելու մասին**, վարույթ ընդունելը մերժվել է (հատոր 2-րդ, գ. թ. 88-90):

5) Թիվ ԱՎԴԴ/0007/01/16 քրեական գործով 07.02.2020 թվականին կայացված դատավճռով, ի թիվս այլի, վճռվել է. **«Քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված (...), Վահան Սիմոնյանի ներկայացրած 397,735 գրամ ոսկեգույն ձուլակտորները վերադարձնել «ԳեոՊրոմայնինգ» ՍՊԸ-ին՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո»:**

Վահան Սիմոնյանի այլ գույքերի՝ ներառյալ ՀՀ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված թվով 31 անուն ոսկյա ու ադամանդյա զարդերի վրա դրված արգելանքը (կալանքը) պահպանելու/վերացնելու, ինչպես նաև Վահան Սիմոնյանից դատական ծախսի փոխհատուցում բռնագանձելու հարցեր նշված դատավճռով չեն լուծվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, և քրեական գործով վարույթն ավարտվել է (հիմք՝ «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգ, քրեական գործ թիվ ԱՎԴԴ/0007/01/16):

6) Թիվ ԱՎԴԴ/0042/01/17 և թիվ ԱՎԴԴ/0007/01/16 քրեական գործերով Վահան Սիմոնյանի դեմ քաղաքացիական հայց չի ներկայացվել (հիմք՝ «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգ, քրեական գործեր թիվ ԱՎԴԴ/0042/01/17 և ԱՎԴԴ/0007/01/16):

7) Գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ա. Մնացականյանի 11.11.2021 թվականի թիվ 11-780-21 գրությամբ Վահան Սիմոնյանի ներկայացուցիչ Կ. Հովհաննիսյանին հայտնվել է, որ **«(...) մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված և դատավճիռ կայացված քրեական գործերով քննիչը և դատախազը չեն հանդիսանում միջնորդությունների քննարկման և լուծման պատշաճ հաստատություններ, հետևաբար գույքի վրա դրված կալանքի վերացման հարցի քննարկումը և այդ կապակցությամբ դատավարական գործողությունների կատարումը ներկայումս գտնվում է ՀՀ դատախազության և նախաքննական մարմինների լիազորությունների տիրույթից դուրս»**

(հատոր 2-րդ, գ. թ. 103-104).

8) Թիվ ԱՎԴԻ/0042/01/17 քրեական գործով 04.12.2018 թվականին դատավճիռ կայացրած՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մակյանի 24.01.2022 թվականի թիվ ԴԴ-9.1-Ե-16356 գրությամբ, ի պատասխան Վահան Սիմոնյանի ներկայացուցիչ Կ. Հովհաննիսյանի 19.01.2022 թվականի՝ «Դատավճռում առկա անհատականությունը լուծելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ» դիմումի, հայտնվել է, որ «(...) Ձեր կողմից բարձրացված հարցերը ենթակա չեն լուծման ՀՀ քրեական դատավարության օրսգրքի 430-րդ հոդվածով սահմանված կարգով» **(հատոր 2-րդ, գ. թ. 115-116):**

9) Սույն գործով հայցվորներ Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը Դատարան ներկայացված հայցի հիմքում դրել են այն, որ թիվ ԱՎԴԻ/0042/01/17 և թիվ ԱՎԴԻ/0007/01/16 քրեական գործերով վարույթներն ավարտվելուց հետո առկա չէ իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ քրեական գործով կիրառված սահմանափակումները պահպանելու որևէ հիմք, քանի որ թիվ ԱՎԴԻ/0042/01/17 քրեական գործով Վահան Սիմոնյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, թիվ ԱՎԴԻ/0007/01/16 քրեական գործով 07.02.2020 թվականին կայացված դատավճռով Վահան Սիմոնյանի վրա դատական ծախսերի փոխհատուցման պարտականություն չի դրվել, նրա դեմ տուժողների կողմից երբևէ քաղաքացիական հայց չի հարուցվել, հետևաբար, վերացել է նշված սահմանափակումները պահպանելու քրեադատավարական անհրաժեշտությունը, որպիսի պայմաններում Կենտրոնական բանկն ապօրինի է պահում 05.12.2016 թվականի արձանագրություններով իրեն ի պահ հանձնված 31 անուն զարդերը, ինչպես նաև առանց որևէ իրավական հիմքի պահպանվում է իրենց սեփականության իրավունքով պատկանող շարժական և անշարժ գույքերի նկատմամբ կիրառված կալանքը: Որպես հայցի իրավական հիմք հայցադիմումում նշվել են Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ ու 274-րդ հոդվածները **(հատոր 1-ին, գ. թ. 5-14):**

10) Կենտրոնական բանկը 23.05.2023 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հիմքով կարճել սույն քաղաքացիական գործի վարույթը **(հատոր 5-րդ, գ. թ. 89-93):**

11) Հակակոռուպցիոն կոմիտեն 21.06.2023 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հիմքով կարճել սույն քաղաքացիական գործի վարույթը **(հատոր 5-րդ, գ. թ. 124-133):**

12) Դատարանը Կենտրոնական բանկի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջնորդությունները մերժել է **(հատոր 5-րդ, գ. թ. 149-160):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը

կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի ու «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որը մասնակիորեն հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ՝

1. գույքի հնարավոր բռնագանձումն ապահովելու նպատակով քրեական գործի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից կիրառված արգելանքը (կալանքը) քաղաքացիադատարարական ընթացակարգի շրջանակներում վերացնելու և տվյալ գույքը շահագրգիռ անձին վերադարձնելու իրավական հնարավորությանը.

2. քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշմամբ անձի գույքի վրա դրված արգելանքը (կալանքը) հանելու մասին պահանջների նկատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի կիրառելիությանը:

(Ա) Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ նույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու

իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան պատկանող գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է (...), սեփականության անձեռնմխելիության, (...), քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: (...):

Սահմանադրական դատարանը 31.01.2017 թվականի ՍԴՈ-1340 և 14.09.2021 թվականի ՍԴՈ-1609 որոշումներով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավագործությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել **սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու, ինչպես նաև ժառանգելու իրավունքը**: Միևնույն ժամանակ, սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ սեփականության իրավունքին միջամտությունը համարել է ընդունելի: Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին ու չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ նշված պայմանների առկայությունն անհրաժեշտ է իրավունքն իրավաչափորեն սահմանափակելու համար:

Վերոշարադրյալ նորմերի և Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքի հնարավոր բռնագանձումն ապահովելու նպատակով քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից անձին պատկանող գույքի նկատմամբ արգելանք (կալանք) կիրառելը հարկ է դիտարկել որպես անձի սեփականության իրավունքին միջամտություն և այդ իրավունքի սահմանափակում, որը

կարող է իրավաչափ համարվել բացառապես վերը նշված սահմանադրական պահանջներին բավարարելու պարագայում:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից բխում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների ու (կամ) ազատությունների խախտման դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ***բոլոր այն դեպքերում, երբ առկա է վեճ հանրային իշխանության, այդ թվում՝ քրեական հեփապնդում իրականացնող մարմինների կողմից անձին պարկանող գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների իրավաչափության վերաբերյալ, տվյալ անձի համար սահմանադրական մակարդակում երաշխավորված է արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:***

Երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է այն իրավական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս գործնականում ապահովելու այդ իրավունքի իրացումը: Դրանցից է նաև դատավարական նորմերով սահմանված այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որի իրավասությանն այն վերապահված է օրենքով: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգի միջոցով, ինչպիսիք են ենթակայությունը (առարկայական ընդդատությունը) և տարածքային ընդդատությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի և իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի ենթակայությունը ճիշտ որոշելն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ դատական պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն պարագայում, երբ գործի քննությունն իրականացվում է իրավասու դատարանի կողմից՝ տվյալ դատավարությանը բնորոշ կանոններով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ և հակառակը, եթե գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ապա դա հանգեցնում է դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտմանը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործը քննում են քաղաքացիական կամ քրեական մասնագիտացման դատավորները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերը քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասությանը ենթակա մյուս գործերը քննում է քաղաքացիական մասնագիտացման դատավորը:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության միջոցի արդյունավետության հարցին, արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում են գործերի առարկայական ընդդատության իրենց կանոնները (*տե՛ս Սահմանադրական դատարանի 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ***առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորների կողմից քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակն օրենսդիրը սահմանել է այդ շրջանակից առանձին կատեգորիայի գործերի բացառման սկզբունքով՝ վերջիններս վերապահելով այլ մասնագիտացման դատավորների կամ այլ դատարանների իրավասությանը: Այլ կերպ ասած՝ իրավունքի մասին վեճի կապակցությամբ ցանկացած գործ ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորների կողմից, բացառությամբ՝***

1) քրեական գործերի, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով

նախադեսված գործերի, որոնք քննում է միայն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորները,

2) Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի,

3) մասնագիտացված դատարանների իրավասությանը վերապահված գործերի:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, սահմանելով իրավունքի մասին վեճի հետ կապված գործերի ենթակայությունն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին, միաժամանակ բացառել է այլ՝ վարչական, քրեական և Սահմանադրական դատարանի լիազորությունների տիրույթում գտնվող գործերի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով՝ այդպիսով հստակ տարանջատելով այն գործերի ցանկը, որոնք ենթակա են կոնկրետ դատարանների քննությանը: Ընդ որում, այդօրինակ տարանջատումն ուղղակիորեն բխում է դատավարական օրենսգրքերի կարգավորման առարկաներից, այդ թվում նաև՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարբեր մասնագիտացման դատավորների իրավասությանը հանձնված գործերի (հարցերի) քննության և լուծման դատավարական առանձնահատկություններից:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված քրեական գործերի քննության ժամանակ գործած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն վեճի նկատմամբ կիրառման ենթակա իրավակարգավորումներին, արձանագրում է հետևյալը.

01.07.2022 թվականին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար:

Նույն օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործի վարույթը, այն է՝ քրեական գործի հարուցման նախապատրաստումը, հարուցումը, քրեական հետապնդումը, ինչպես նաև հարուցված գործի և իրականացվող **քրեական հետապնդման հետ կապված բոլոր դատավարական գործողությունները և որոշումների ընդունումը կատարում են նույն օրենսգրքով սահմանված մարմինները և պաշտոնատար անձինք՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:**

Նույն օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանք դրվում է կասկածյալի և մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա, կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում:

Նույն օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կատարվում է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման հիման վրա:

Նույն օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնում են գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և պահանջում հանձնել այն: Այդ պահանջը կամովին կատարելուց հրաժարվելու դեպքում գույքի վրա կալանքը դրվում է հարկադիր կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործի նախնական քննության ավարտից հետո դատարանի կայացրած որոշմամբ գույքի վրա կալանք դնելն իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

Նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին, սակայն ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշման ի կատար ածելը:

Նույն օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքը, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ազատվում է կալանքից, եթե քաղաքացիական հայցը հետ վերցվելու, կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ պատճառներով վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ դատարանն իրավունք ունի գույքի վրա դրված կալանքը պահպանել նաև քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ մինչև 01.07.2022 թվականը գործած իրավակարգավորումների համաձայն՝ քրեական դատավարության կարգով գույքի վրա կալանք դնելը կիրառվել է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար: Նշված կալանքը դրվել է ինչպես կասկածյալի և մեղադրյալի, այնպես էլ այն անձանց գույքի վրա, որոնց վրա, կասկածյալի ու մեղադրյալի գործողությունների համար, կարող էր դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է այն և ում մոտ է գտնվել:

Քրեական դատավարության կարգով նախաքննության ժամանակ գույքի վրա կալանք դնելը կատարվել է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման հիման վրա, ովքեր տվյալ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնել են գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը՝ պահանջելով այն հանձնել: Որոշումը հարկադիր կարգով է կատարվել այն դեպքում, երբ անձը հրաժարվել է այդ պահանջը կամովին կատարելուց: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը ենթակա է եղել բողոքարկման դատախազին:

Ինչ վերաբերում է քրեական գործի նախնական քննության ավարտից հետո դատարանի կայացրած որոշմամբ գույքի վրա կալանք դնելուն, ապա այն իրականացվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից:

Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է նաև այն դեպքերը, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ գույքը հնարավոր է եղել ազատել կալանքից, դրանք են՝ քաղաքացիական հայցը հետ վերցվելը, կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ պատճառներով գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը վերացվելը:

Ընդ որում, քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ դատարանն իրավունք է ունեցել գույքի վրա դրված կալանքը պահպանել նաև քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ունենալով սահմանադրորեն հստակ ամրագրված շրջանակ, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմին, այդ թվում՝ դատարանը, իր գործառույթները պետք է իրականացնի Սահմանադրությամբ կամ օրենքներով իրեն վերապահված լիազորություններին համապատասխան: (...) Քրեական գործերով վարույթն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան, որով օրենսդիրը գույքի վրա կալանք դնելը պայմանավորել է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշմամբ: Նույն օրենսգրքի համաձայն՝ գույքը կալանքից ազատվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի՝

դատարանի, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ: Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ քրեական գործերի վարումը, ներառյալ՝ քրեական գործերով դրված կալանքից գույքն ազատելու հետ կապված հարաբերությունները, կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Ավելին՝ քրեադատավարական օրենքով սահմանված են նաև գույքը կալանքից ազատելու հիմքերը և կարգը, իսկ այդ գործողությունը քրեադատավարական օրենքին համապատասխան կարող է իր որոշմամբ կատարել քրեական վարույթն իրականացնող մարմինը: Քրեական դատավարությունում միայն վերջինս է իրավասու որոշելու, թե արդյոք վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը (*տե՛ս ըստ Խորեն Մկրտչյանի դիմումի՝ Սամվել Մելիքյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԴ/0945/04/18 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2023 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթի շրջանակում գույքի վրա արգելանք (կալանք) դնելու վերաբերյալ որոշումները կայացվում և վերացվում են (Նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մաս) **քրեական վարույթն իրականացնող մարմնի**, ի թիվս այլնի, նաև քննիչի կողմից, հետևաբար նման որոշումների իրավաչափության հարցը կարող է գնահատվել բացառապես քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված նորմերով ու ընթացակարգերով: Ընդ որում, օրենսդիրը քրեական դատավարության օրենսդրությամբ հստակ սահմանել է, որ նույն օրենսգրքով նախատեսված քննիչի կողմից կայացրած որոշումները, այդ թվում նաև՝ գույքի վրա արգելանք (կալանք) դնելու վերաբերյալ որոշումը, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից կարող է բողոքարկվել դատախազին (Նախկին քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդված), իսկ դատախազի կողմից դրանք բավարարված չլինելու պարագայում նաև դատարանում (Նախկին քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված):

Արձանագրելով, որ դատարանը չի կարող հրաժարվել սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը երաշխավորելուց, համարժեք դատավարական երաշխիքների տրամադրմամբ նրա արդարադատության մատչելիությունն ու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումների վերացումն ապահովելուց՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշմամբ անձի գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները դատական կարգով վերացնելու հարցում սեփականատերը չի կարող դրվել դատավարական անելանելիության վիճակում, ինչն անհամատեղելի է իրավունքի գերակայության՝ ներառյալ իրավական որոշակիության սահմանադրական հրամայականների հետ, անխուսափելիորեն կհանգեցնի սահմանադրորեն ճանաչված արժեքների հավասարակշռության խախտման, քանզի անձը ոչ միայն կզրկվի իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, այլև կպահպանվի սեփականության իրավունքի սահմանադրաիրավական էության հետ անհամատեղելի միջամտությունն այդ իրավունքին՝ այն վերանայելու համապատասխան դատավարական գործիքակազմի բացակայության հիմքով: Այլ կերպ ասած՝ քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշմամբ անձի գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները դատական կարգով վերացնելու հնարավորությունը որևէ պարագայում բացառվել չի կարող:

Նշվածի հաշվառմամբ և վերը շարադրված իրավակարգավորումների ու արտահայտված իրավական դիրքորոշումների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից անձին պատկանող գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների (կալանքի, արգելանքի) պահպանման իրավաչափության վերաբերյալ վեճը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հարցն ուղղակիորեն պայմանավորված է տվյալ քրեական վարույթի ավարտված կամ չավարտված լինելու փաստով: Մասնավորապես՝**

ա) եթե քրեական գործի վարույթն ավարտված է, որի ուժով սպառված է վարույթի մասնակցի իրավունքների պաշտպանության քրեադատավարական գործիքակազմը, այլևս բացակայում է քրեական գործի շրջանակում անձի գույքի վրա դրված կալանքը (արգելանքը) քրեադատավարական ընթացակարգերով վերացնելու, որոշումը վերացնելու (վերանայելու) իրավական հնարավորությունը, առնվազն այն պարճառով, որ քրեական վարույթի ավարտից հետո դադարում են տվյալ գործով քրեական հետապնդում իրականացրած մարմինների՝ ներառյալ գործը քննած դատարանների՝ այդ գործի հետ կապված դատավարական գործողություններ և որոշումներ ընդունելու լիազորությունները, անձն իր իրավունքի պաշտպանության պահանջով կարող է դիմել դատարան քաղաքացիական դատավարության կարգով, այլ կերպ ասած՝ նման պայմաններում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից անձին պատկանող գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների (կալանքի, արգելանքի) վերացման վերաբերյալ պահանջը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով.

բ) այն դեպքերում, երբ տվյալ քրեական գործով վարույթը դեռևս ավարտված չէ, հետևաբար դեռևս առկա են այդ գործի հետ կապված դատավարական գործողություններ և որոշումներ ընդունելու լիազորություններ ունեցող մարմիններ և քրեադատավարական գործիքակազմով վարույթի մասնակցի իրավունքների պաշտպանության օրենքով երաշխավորված հնարավորություն, քրեական գործի շրջանակում քրեական հետապնդումն իրականացնող մարմինների կողմից անձի գույքի վրա դրված կալանքը (արգելանքը) վերացնելու հարցը կարող է լուծվել բացառապես քրեադատավարական ընթացակարգերով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորը չի կարող համարվել իրավասու մարմին քրեական վարույթի շրջանակներում քննիչի կողմից գույքի վրա արգելանք (կալանք) դնելու վերաբերյալ կայացրած որոշումը վերացնելու հարցը քննելու և այն վերացնելու համար բացառապես այն պարագայում, երբ քրեական գործով վարույթը դեռևս ավարտված չէ և սպառված չէ վարույթի մասնակցի իրավունքների պաշտպանության քրեադատավարական գործիքակազմը: Հակառակ պարագայում, հիմք ընդունելով հանրային իշխանության, այդ թվում՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից անձի սեփականության իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը վերացնելու, արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ նրա համար արդյունավետ դատական պաշտպանության իրացումը երաշխավորելու սահմանադրական հրամայականները, ինչպես նաև սեփականության անձեռնմխելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման և դրանց դատական պաշտպանության քաղաքացիաիրավական սկզբունքները, պետք է

ապահովվի ավարտված քրեական վարույթի շրջանակներում կիրառված և այլևս ոչ իրավաչափորեն պահպանվող սահմանափակումները վերացնելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքը:

(Բ) Անդրադառնալով քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշմամբ անձի գույքի վրա դրված արգելանքը (կալանքը) հանելու մասին պահանջների նկատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (այսուհետ՝ դատարաններ) դատական ակտերի, (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

Մինչև 01.03.2023 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերին համապատասխան **հանդես են գալիս որպես կատարողական վարույթի կողմեր:**

Մինչև 01.07.2022 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ **պահանջատերը և պարտապանը:**

Պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը: (...):

Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից: (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներ են՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա **արգելանք դնելը**, սահմանափակում կիրառելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք): (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի **պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում** շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը:

Մինչև 01.07.2022 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է ընդդեմ պարտապանի և պահանջատիրոջ: Եթե գույքի վրա արգելանք է դրվել դատավճռով գույքը բռնագրավելու կապակցությամբ, ապա որպես պատասխանող ներգրավվում են դատապարտյալը և համապատասխան ֆինանսական մարմինը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, **գլխի, բաժնի կարգավորման համադրությից**, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը ներառված է նույն օրենքի՝ «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը» վերտառությամբ 5-րդ գլխում: Իր հերթին, օրենսդիրը, օրենքի 5-րդ գլուխը վերնագրելով «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը», նկատի է ունեցել նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկադիր կատարման միջոցը:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը, տվյալ նորմերը մեկնաբանելով վկայակոչված գլխի և վերը նշված օրենքի կարգավորման համատեքստում, գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածում նշված հիմքով՝ պարտապան չհանդիսացող գույքի սեփականատերը կամ դրա օրինական տիրապետողն իրավունք ունեն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմելու գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան այն դեպքում, **երբ գույքի վրա արգելանքը դրվել է հարկադիր կատարողի կողմից՝ որպես հարկադիր կատարման միջոց պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու համար**, և առկա է վեճ այդ գույքի պատկանելության վերաբերյալ: Ընդ որում, մինչև 01.07.2022 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրը, անդրադառնալով դատավճռով գույքը բռնագրավելու կապակցությամբ դրված արգելանքին, կրկին նկատի է ունեցել բացառապես **այն արգելանքը, որը կիրառվել է հարկադիր կատարողի կողմից՝ պարտապանի գույքը բռնագրավելու մասին դատարանի դատավճիռը կատարելու նպատակով**:

Ավելին՝ օրենսդիրը կարգավորման ոլորտի շրջանակը հստակեցնելու նպատակով 09.06.2022 թվականին ընդունված ու 01.07.2022 թվականին օրինական ուժի մեջ մտած «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով, որի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում քրեական գործերով արգելանքի տակ գտնվող գույքի վրա:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշմամբ անձի գույքի վրա դրված արգելանքը (կալանքը) հանելու մասին պահանջների նկատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը կիրառելի չէ, ընդ**

որում՝ անկախ փվյալ քրեական գործով վարույթն ավարտված լինելու փաստից, քանի որ նշված հարցը դուրս է քննարկվող օրենքի կարգավորման տիրույթից:

(Գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ, 277-րդ և 278-րդ հոդվածներն ուղղված են պաշտպանելու և՛ սեփականատիրոջ իրավունքները, և՛ այն անձանց իրավունքները, ովքեր նշված գույքը տիրապետում են պայմանագրի կամ օրենքի հիման վրա (տե՛ս Սարգիս և Ռոզա Գևորգյաններն ընդդեմ Արմենուհի Հովհաննիսյանի թիվ ԵԿԴ/1572/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է սեփականատիրոջ՝ իր գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու իրավունքին՝ արձանագրելով, որ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: **Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի** (տե՛ս Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է: Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (տե՛ս Միսակ-Նուբար Թերելեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի վերլուծությանը, փաստել է, որ վինդիկացիոն հայցը կարող է հարուցվել միայն ապօրինի տիրապետողի դեմ, հետևաբար այդպիսի հայցով պատշաճ պատասխանող կարող է լինել այն անձը, ում ապօրինի տիրապետման ներքո գտնվում է սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գույքը (տե՛ս Վարդան Ղազարյանն ընդդեմ Լևոն Գրիգորյանի թիվ ԼԴ1/0030/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Վինդիկացիոն հայց կարող է հարուցվել ցանկացած անձի (ֆիզիկական, իրավաբանական անձ) դեմ, որը գույքը տիրապետում է առանց որևէ իրավական հիմքի: Վինդիկացիայի միջոցով սեփականատերը, ինչպես նաև գույքի օրինական տիրապետողները ցանկանում են այլ անձի անօրինական տիրապետությունից բնեղենով հետ ստանալ այն գույքը, որի նկատմամբ զրկված են սուբյեկտիվ իրավունքներ իրականացնելու հնարավորությունից: Սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության հիմնական նպատակը՝ իր գույքի վերադարձման միջոցով վերականգնել իր իրավունքը, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու անօրինականությամբ ընդհատված իրավագործությունների իրականացումը: Վինդիկացիոն հայցի սուբյեկտը գույքի անօրինական տիրապետողն է, իսկ օբյեկտը՝ անհատապես կամ տեսականիշներով որոշվող գույքն է, որը գտնվում է ուրիշի ապօրինի տիրապետության ներքո, իսկ որպես

պատասխանող սույն հայցատեսակով կարող է լինել միայն գույքի փաստացի տիրապետողը, որի տիրապետման անօրինականությունը պետք է ապացուցվի վինդիկացիայի ընթացքում (տե՛ս «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Արտադրա-փայագրական» ՓԲԸ-ի և մյուսների թիվ ԵՄԴ/0462/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2019 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածով սահմանված կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սեփականության իրավունքի պաշտպանության շրջանակներում նախատեսել է իր գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու սեփականատիրոջ իրավունքը, սակայն բացառապես այն պայմաններում, երբ նման տիրապետումն ապօրինի է, այսինքն՝ առանց որևէ իրավական հիմքի՝ տվյալ իրավանորմի շրջանակներում ապահովելով ինչպես գույքի սեփականատիրոջ, այնպես էլ գույքն օրինական հիմքերով տիրապետողի իրավունքների պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականին որոշում է կայացվել քաղաքացիական հայցի ու գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով մեղադրյալ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի վրա քրեական գործով կալանք դնելու մասին: Դրա հիման վրա Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Լ. Ստեփանյանի կողմից 08.11.2016 թվականին կազմվել է «Գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ» արձանագրություն, որի համաձայն՝ կալանք է դրվել «Ոսկու աշխարհ» տոնավաճառում գտնվող տաղավարում մեղադրյալ Վահան Սիմոնյանին պատկանող թվով 21 անուն մատանու և 10 զույգ ականջօղերի վրա: Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի 28.11.2016 թվականի «Կալանք դրված գույքը պահպանության հանձնելու մասին» որոշմամբ՝ Վահան Սիմոնյանի պահախցից թվով 31 անուն դեղին մետաղից զարդերը փաթեթավորված և կնիքված վիճակում հանձնվել են Կենտրոնական բանկ պահպանության, որի վերաբերյալ 05.12.2016 թվականին կազմվել է գույքը պահպանության հանձնելու մասին թիվ 1 արձանագրությունը:

Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով 04.12.2018 թվականին կայացված դատավճռով դատական ծախսերի, ինչպես նաև հնարավոր քաղաքացիական հայցի բռնագանձումն ապահովելու նպատակով պահպանվել է Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 08.11.2016 թվականին կայացված «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև նախաքննության մարմնի կողմից 05.12.2016 թվականին կազմված արձանագրությամբ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված՝ 399.810 գրամ քաշով ոսկու ձուլակտորների և 31 անուն դեղին մետաղից զարդերի վրա դրված կալանքը: Քրեական գործով դատական ծախսերի բռնագանձման և իրեղեն ապացույցների տնօրինման հարցերը թողնվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի լուծմանը՝ նույն դատարանում քննվող թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործով կայացվելիք գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ամբաստանյալ Վահան Սիմոնյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քրեական գործի շրջանակներում անդրադառնալով

Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 08.11.2016 թվականին կայացված «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշումը վերացնելու և 05.12.2016 թվականի արձանագրությամբ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված թվով 31 անուն ոսկյա ու ադամանդյա զարդերի վրա դրված կալանքը վերացնելու, «կալանադրված գույքը» Վահան Սիմոնյանին վերադարձնելու մասին վերաքննիչ բողոքում նշված պահանջին, 17.09.2019 թվականի որոշմամբ այն մերժել է՝ պատճառաբանելով, որ «*տուժողի դատավարական իրավունքների իրացման երաշխիքները, ինչպես նաև դատական ծախսերն ապահովելու նկատառումներից ելնելով՝ չի կարող բավարարվել նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Էդ.Հակոբյանի կողմից 2016թ. նոյեմբերի 8-ին կայացված՝ «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ Վահան Վահագնի Սիմոնյանի անշարժ և շարժական գույքերի, ինչպես նաև՝ նախաքննական մարմնի կողմից 2016թ. մայիսի 3-ին և 2016թ. դեկտեմբերի 5-ին կազմված արձանագրություններով՝ ՀՀ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված ոսկու ծուլակտորների և 31 անուն զարդերի վրա դրված կալանքը վերացնելու մասին բողոքաբերի պահանջը, քանի որ չի վերացել գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը: Հետևաբար այս առումով ևս ամբաստանյալի իրավունքների խախտումներ առկա չեն*»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 24.01.2020 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 17.09.2019 թվականի որոշման դեմ ամբաստանյալ Վահան Սիմոնյանի և պաշտպան Կ. Հակոբյանի վճռաբեկ բողոքը, որով *պահանջ է ներկայացվել նաև գույքի վրա կալանք դնելու բոլոր որոշումներով վերցված ամբողջ ոսկյա զարդերը Վահան Սիմոնյանին վերադարձնելու, ինչպես նաև անշարժ և շարժական գույքի վրա կիրառված բոլոր արգելանքները վերացնելու մասին*, վարույթ ընդունելը մերժվել է:

Այժմ Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը քաղաքացիական դատավարության կարգով հայց են ներկայացրել Դատարան և ներկայացված հայցի հիմքում դրել են այն, որ թիվ ԱՎԴ1/0042/01/17 և թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործերով վարույթներն ավարտվելուց հետո առկա չէ իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ քրեական գործով կիրառված սահմանափակումները պահպանելու որևէ հիմք, քանի որ թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով Վահան Սիմոնյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործով 07.02.2020 թվականին կայացված դատավաճռով Վահան Սիմոնյանի վրա դատական ծախսերի փոխհատուցման պարտականություն չի դրվել, նրա դեմ տուժողների կողմից երբևէ քաղաքացիական հայց չի հարուցվել, հետևաբար վերացել է նշված սահմանափակումները պահպանելու քրեադատավարական անհրաժեշտությունը, որպիսի պայմաններում Կենտրոնական բանկն ապօրինի է պահում 05.12.2016 թվականի արձանագրություններով իրեն ի պահ հանձնված 31 անուն զարդերը, ինչպես նաև առանց որևէ իրավական հիմքի պահպանվում է իրենց սեփականության իրավունքով պատկանող շարժական և անշարժ գույքերի նկատմամբ կիրառված կալանքը: Որպես հայցի իրավական հիմք հայցադիմումում նշվել են Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածները, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ ու 274-րդ հոդվածները:

Դատարանը, վկայակոչելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը և պատճառաբանելով, որ՝ «*Դատական ակտերի հարկադիր կատարման մասին*» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը թե քաղաքացիական,

և թե քրեական գործերով երաշխավորում են արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը նաև այն դեպքում, երբ գործով վարույթն ավարտվել է: Ի դեպ, նախատեսվել են նաև այդ իրավունքի իրականացման մեխանիզմները, այն է՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Վերոնշյալից հետևում է, որ թե քաղաքացիական, և թե քրեական գործերի վարույթների ավարտից հետո շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով».

28.12.2023 թվականի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն՝ վճռել է. «Վերացնել թիվ 69104615 քրեական գործի շրջանակներում ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից 08.11.2016 թվականի որոշմամբ կիրառված կալանքը: Հայցը՝ մնացած մասով, մերժել: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից հոգուր Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից հոգուր Վահան Վահագնի Սիմոնյանի, Սյուզաննա Յուրիկի Գալստյանի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Դատական ծախսերի բաշխման հարցը մնացած մասով համարել լուծված»:

Միաժամանակ Դատարանը մերժել է Հակակոռուպցիոն կոմիտեի և Կենտրոնական բանկի միջնորդությունները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հիմքով սույն քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին:

Վերաքննիչ դատարանը, Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վկայակոչելով նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածն ու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, և արձանագրելով, որ՝

- «Սույն գործով Դատարան ներկայացված հայցով, ի թիվս այլնի, հայցվորը պահանջել է ՀՀ կենտրոնական բանկին պարտավորեցնել վերադարձնել 31 անուն ոսկյա և ադամանդյա զարդերը: Այսինքն, հայցվորի կողմից շարժական գույքի մասով ներկայացվել է վինդիկացիոն հայց, իսկ Վճռաբեկ դատարանի որոշումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վինդիկացիոն հայցով պատասխանող է գույքը տիրապետողը, որը սույն դեպքում ՀՀ կենտրոնական բանկն է, քանզի գույքը պահապնության է հանձնված հենց վերջինիս, տվյալ պահին գույքը գտնվում է նրա տիրապետության ներքո»,

- «Սույն դեպքում Դատարանը արդեն իսկ հաստատված է համարել, որ գույքի վրա կալանք դնելու հիմքը վերացված է, և քրեական գործով հայցվորի վրա որևէ գույքային պարտավորություն դրված չէ: Կալանքը դրվել էր՝ ի ապահովումն քաղաքացիական հայցի և գույքի հնարավոր բռնագրավման: Հետևաբար, այն պահից սկսած, երբ համանման անհրաժեշտությունը վերացել էր, գույքի հետագա տիրապետումը համարվում է ոչ իրավաչափ. գույքի տիրապետման իրավազորությունը սեփականատիրոջ սեփականության իրավունքի բաղկացուցիչ տարրն է, և օրենքով նախատեսված

համապատասխան հիմքերի բացակայության դեպքում կարող է այլ անձի զիջվել միայն սեփականատիրոջ համաձայնությամբ»,

եզրահանգել է, որ՝

- «Վահան Վահագնի Սիմոնյանի և Սյուզաննա Յուրիկի Գալստյանի հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի ենթակա էր բավարարման, և սույն գործով պետք է պարտավորեցնել ՀՀ կենտրոնական բանկին Վահան Վահագնի Սիմոնյանին և Սյուզաննա Յուրիկի Գալստյանին վերադարձնել 31 անուն ոսկյա և ադամանդյա զարդերը»:

Վերաքննիչ դատարանը Հակակոռուպցիոն կոմիտեի վերաքննիչ բողոքը ևս բավարարել է՝ արձանագրելով նաև, որ «սույն գործով գույքը արգելանքից հանելու պահանջի մասով Հակակոռուպցիոն կոմիտեն պաշտոնապես պարտասխանող չէ, քանզի համապատասխան ֆինանսական մարմինը չէ, իսկ դատապարտյալը հայցվորն է: Հետևաբար, գույքը արգելանքից հանելու պահանջը ընդդեմ Հակակոռուպցիոն կոմիտեի չէր կարող բավարարվել»:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «օրենքի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը ուժի մեջ է մտել 01.07.2022 թվականին, իսկ սույն գործով հայցը հարուցվել է 17.02.2022 թվականին, ինչը նշանակում է, որ 09.06.2022 թվականին ընդունված թիվ ՀՕ-237-Ն օրենքով կատարված փոփոխությունները սույն գործը լուծելիս կիրառման ենթակա չեն, որպես վարթարացնող օրենք չեն կարող հետադարձ ուժ ունենալ»:

Վերը նշված իրավական նորմերի, դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով ստորադաս դատարանների վերը նշված հետևությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու կառուցակարգը նպատակաուղղված է անձի գույքային իրավունքների և, հատկապես, սեփականության իրավունքի պաշտպանության ապահովմանը: Թեև գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը բավարարելու իրավական հիմքերն օրենսդրորեն սահմանված չեն, սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ հայցը ենթակա է բավարարման այն դեպքերում, երբ այս կամ այն գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի քննությամբ հիմնավորվում է, որ գույքն արգելանքի տակ պահելը խախտում է այդ գույքից անարգել օգտվելու՝ Կոնվենցիոն իմաստով սեփականատիրոջ իրավունքը:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի

օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*տե՛ս James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*տե՛ս Sporrang and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ*): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*տե՛ս Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ*): Եվրոպական դատարանի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերն ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ*):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով անձի՝ իր «գույքից» անարգել օգտվելու իրավունքի իրականացման նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը կարող է թույլատրելի համարվել վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Ըստ այդմ, արգելանքի տակ գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ենթակա է բավարարման, եթե այդ գույքն արգելանքի տակ պահելը չի համապատասխանում սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններին և չափանիշներին: Այսինքն՝ գույքից անարգել օգտվելու Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի իրավունքի իրականացման նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը կարող է իրավաչափ համարվել միայն սույն որոշմամբ նկարագրված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել քաղաքացիական հայցի ու գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով մեղադրյալ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի վրա քրեական գործով կալանք դնելու մասին: Թիվ ԱՎԴ1/0042/01/17 քրեական գործով 04.12.2018 թվականին կայացված դատավճռով

Վահան Սիմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: (...): **Դատական ծախսերի, ինչպես նաև հնարավոր քաղաքացիական հայցի բռնագանձումն ապահովելու նպատակով պահպանվել է Հատուկ քննչական ծառայության վարչության պերի տեղակալ Էդ. Հակոբյանի կողմից 08.11.2016 թվականին կայացված «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշմամբ Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև նախաքննության մարմնի կողմից 05.12.2016 թվականին կազմված արձանագրությամբ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված՝ 399.810 գրամ քաշով ոսկու ձուլակտորների և 31 անուն դեղին մետաղից զարդերի վրա դրված կալանքը:** Քրեական գործով դատական ծախսերի բռնագանձման և իրեղեն ապացույցների փնտրման հարցերը թողնվել է ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի լուծմանը՝ նույն դատարանում քննվող թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործով կայացվելիք գործն ըստ էության լուծող վերջանական դատական ակտով: Թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործով 07.02.2020 թվականին կայացված դատավճռով, ի թիվս այլի, վճռվել է. **«Քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված (...), Վահան Սիմոնյանի ներկայացրած 397,735 գրամ ոսկեգույն ձուլակտորները վերադարձնել «ԳեոՊրոմայնինգ» ՍՊԸ-ին՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո»:** Վահան Սիմոնյանի այլ գույքերի՝ ներառյալ Կենտրոնական բանկին ի պահ հանձնված թվով 31 անուն ոսկյա ու ադամանդյա զարդերի վրա դրված արգելանքը (կալանքը) պահպանելու/վերացնելու, ինչպես նաև Վահան Սիմոնյանից դատական ծախսի փոխհատուցում բռնագանձելու հարցեր նշված դատավճռով չեն լուծվել: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, և քրեական գործով վարույթն ավարտվել է: Թիվ ԱՎԴ1/0042/01/17 և թիվ ԱՎԴ1/0007/01/16 քրեական գործերով Վահան Սիմոնյանի դեմ քաղաքացիական հայց չի ներկայացվել:

Վերը նշված քրեական գործերի ավարտից հետո Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը քայլեր են ձեռնարկել քրեադատավարական ընթացակարգով իրենց իրավունքները վերականգնելու ուղղությամբ (հիմք՝ սույն որոշման 7-8-րդ փաստերը), սակայն արդյունքի չհասնելով՝ հայցադիմում են ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով վերացնել քրեական գործի շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից Վահան Սիմոնյանի անշարժ և շարժական գույքի նկատմամբ կիրառված կալանքները (հիմք՝ սույն որոշման 9-րդ փաստը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը դրսևորվել է քրեական վարույթի շրջանակներում այդ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու և քրեական վարույթը եզրափակող վերջնական դատական ակտով այն անորոշ ժամկետով պահպանելու եղանակով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ վերոգրյալ միջամտության իրավաչափության հարցը՝ հիմք ընդունելով նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված սկզբունքային դրույթները:

Այսպես, սույն գործով գույքի նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում կալանք կիրառելը և դրա հետևանքով այդ գույքի վրա արգելանք դնելը նախատեսված է օրենքով (Նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ և 238-րդ հոդվածներ): Բացի այդ, գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ կիրառվող նման միջամտությունը

բխում է հանրային շահից և հետապնդում է իրավաչափ նպատակ, քանի որ քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերը: Այսինքն՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ քննարկվող միջամտությունը բավարարում է սեփականության իրավունքի իրականացման նկատմամբ միջամտության թույլատրելիության առաջին երկու պայմաններին:

Վճռաբեկ դատարանը, սակայն, գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո քրեական վարույթն ավարտված լինելու պայմաններում **գույքի վրա դրված արգելանքը պահպանելը չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև**, հետևաբար քրեական վարույթն ավարտված լինելու պայմաններում Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի գույքի վրա դրված արգելանքը պահպանելը հանդիսանում է ոչ իրավաչափ միջամտություն վերջիններիս՝ իենց գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացման նկատմամբ և սահմանափակում է Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված գույքից անարգել օգտվելու իրավունքը: Այլ կերպ ասած՝ ստորադաս դատարանները չէին կարող հրաժարվել Վահան Սիմոնյանի և Սյուզաննա Գալստյանի իրավունքների պաշտպանությունը երաշխավորելուց, համարժեք դատավարական երաշխիքների տրամադրմամբ նրանց արդարադատության մատչելիությունն ու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումների վերացումն ապահովելուց, քանի որ քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշմամբ գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները դատական կարգով վերացնելու հարցում Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը չէին կարող հայտնվել դատավարական անելանելիության վիճակում, որն անհամատեղելի է իրավունքի գերակայության՝ ներառյալ իրավական որոշակիության սահմանադրական հրամայականների հետ, ինչն անխուսափելիորեն կհանգեցներ սահմանադրորեն ճանաչված արժեքների հավասարակշռության խախտման, քանզի Վահան Սիմոնյանը և Սյուզաննա Գալստյանը ոչ միայն կզրկվեն իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, այլև կպահպանվեր սեփականության իրավունքի սահմանադրաիրավական էության հետ անհամատեղելի միջամտությունն այդ իրավունքին՝ այն վերանայելու համապատասխան դատավարական գործիքակազմի բացակայության հիմքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հակասական մեկանաբանություններն ու անորոշությունները բացառելու և դատական միասնական ու կանխատեսելի պրակտիկա ձևավորելու նպատակով սույն գործի փաստերի համադրմամբ անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորը չի կարող համարվել իրավասու մարմին և քննել քրեական վարույթի շրջանակներում քննիչի կողմից գույքի վրա արգելանք (կալանք) դնելու վերաբերյալ կայացրած որոշումը վերացնելու հարցը: Սակայն այն պարագայում, **երբ քրեական գործի վարույթն ավարտված է**, որի ուժով սպառված է վարույթի մասնակցի իրավունքների պաշտպանության քրեադատավարական գործիքակազմը (անձը քրեական դատավարության ընթացակարգով օգտվել է **դատական ակտերը բողոքարկելու իրավունքից, և բողոքարկման արդյունքում դատական ակտերը մնացել են ուժի մեջ**), և այլևս բացակայում է քրեական գործի շրջանակում անձի գույքի վրա դրված կալանքը (արգելանքը) քրեադատավարական

ընթացակարգերով վերացնելու, որոշումը վերանայելու իրավական հնարավորությունը, առնվազն այն պատճառով, որ քրեական վարույթի ավարտից հետո դադարում են տվյալ գործով քրեական հետապնդում իրականացրած մարմինների՝ ներառյալ գործը քննած դատարանների՝ այդ գործի հետ կապված դատավարական գործողություններ և որոշումներ ընդունելու լիազորությունները, **և բացակայում է քրեական դատավարության ընթացակարգով գույքի վրա դրված արգելանքները պահպանելու անհրաժեշտությունը, ապա անձն իր գույքային իրավունքների պաշտպանության պահանջով կարող է դիմել դատարան՝ քաղաքացիական դատավարության ընթացակարգով:** Հակառակ պարագայում կխախտվի ավարտված քրեական վարույթի շրջանակներում գույքի նկատմամբ կիրառված և **այլևս ոչ իրավաչափորեն պահպանվող սահմանափակումները** վերացնելու պահանջով դատարան դիմելու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքներն այս հիմքով անհիմն են, և Վերաքննիչ դատարանը թեև թերի է պատճառաբանել դատական ակտը, անյուամենայնիվ այս մասով եկել է ճիշտ եզրահանգման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում մեկ անգամ ևս ընդգծել, որ ինչպես արդեն վերը նշվեց «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված պահանջը կարող է ներկայացվել այն դեպքում, երբ պարտապան չհանդիսացող գույքի սեփականատիրոջ կամ դրա օրինական տիրապետողի կողմից ներկայացվել է այն գույքն արգելանքից հանելու մասին պահանջ, որի վրա արգելանքը դրվել է հարկադիր կատարողի կողմից՝ որպես հարկադիր կատարման միջոց պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու համար, և առկա է վեճ այդ գույքի պատկանելության վերաբերյալ: Մինչդեռ սույն գործով գույքի վրա դրվել է ոչ թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իմաստով արգելանք, այլ կալանք՝ Նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ քաղաքացիական հայցը և գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով, հետևաբար քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշմամբ անձի գույքի վրա դրված արգելանքը (կալանքը) հանելու մասին պահանջների նկատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը կիրառելի չէ, ընդ որում՝ անկախ տվյալ քրեական գործով վարույթն ավարտված լինելու փաստից, քանի որ նշված հարցը դուրս է քննարկվող օրենքի կարգավորման տիրույթից:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցի իրավական հիմքում դրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի կիրառելիության հարցին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը սույն վեճի նկատմամբ ևս կիրառելի չէ, քանի որ նշված իրավական հիմքով գույքի սեփականատերը կարող է գույքը հետ պահանջել բացառապես այն անձից, ով այն տիրապետում է ապօրինի, այսինքն՝ **առանց որևէ իրավական հիմքի**, մինչդեռ տվյալ դեպքում Վահան Սիմոնյանին պատկանող՝ թվով 31 անուն դեղին մետաղից զարդերը Կենտրոնական բանկ պահպանության են հանձնվել Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի 08.11.2016 թվականի «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշման հիմքով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով ու Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական

ակտ: Հետևաբար, Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Անդրադառնալով Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքի այն հիմքին, որ օրենքի ուժով Կենտրոնական բանկն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և Կենտրոնական բանկից պետական տուրք բռնագանձելու մասով Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ազատվում է հարկերից և տուրքերից (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ազատվում է նույն օրենքով սահմանված բոլոր տեսակի պետական տուրքերի վճարումից:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը 08.07.2024 թվականի որոշմամբ Ֆինանսների նախարարությունից և Կենտրոնական բանկից համապարտության կարգով որոշել է բռնագանձել պետական տուրքի գումար: Մինչդեռ ղեկավարվելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Կենտրոնական բանկն օրենքի ուժով պետական տուրքի գծով արտոնությունից օգտվող սուբյեկտ է, որի արդյունքում վերջինս ուղղակիորեն ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից, ուստի Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ Կենտրոնական բանկից բռնագանձման է ենթակա պետական տուրք գումար, անհիմն է:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն այս մասով հիմնավոր է համարում Կենտրոնական բանկի փաստարկը և գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքի վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 08.07.2024 թվականի որոշումը մասնակիորեն՝ դատական ծախսերի մասով, բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է: Հետևաբար, գործի անհարկի

ծգծգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն՝ դատական ծախսերի մասով, փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններում ներկայացված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոգրյալ պատճառաբանությամբ:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական պահանջից բացի, ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Ֆինանսների նախարարությունը վճարել է 80.000 ՀՀ դրամ, իսկ վերջինիս վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, ուստի Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործով քննության առարկա պահանջների բնույթը և քանակը, Դատարանի 28.12.2023 թվականի վճռի ու Վերաքննիչ դատարանի 08.07.2024 թվականի որոշման բովանդակությունները, գտնում է, որ Ֆինանսների նախարարությունից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «բ» ենթակետի համաձայն բռնագանձման է ենթակա 40.000 ՀՀ դրամ, իսկ մնացած 40.000 ՀՀ դրամը նույն օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ ենթակա է վերադարձման վերջինիս՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Միաժամանակ նկատի ունենալով նաև այն, որ այլ դատական ծախսերի պահանջ չի ներկայացվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը մերժել: Կենտրոնական բանկի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2024 թվականի որոշման՝ Կենտրոնական բանկից համապարտության կարգով պետական տուրքի գումար բռնագանձելու մասը, և այդ մասով փոփոխել. Կենտրոնական բանկի մասով պետական տուրքի հարցը համարել լուծված: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Այլ դատական ծախսերի հատուցման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ **Ա. ՄԿՐՏՉԱՆ**

Զեկուցող _____ **Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ**

_____ **Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

_____ **Ս. ՄԵՂՐՅԱՆ**

_____ **Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ**

_____ **Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**